

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՌՊԱՅՈՒՄ

Գ. Ա. ՇՈՒՈՒՄՊԵՐ

ՖԻՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ

I

ՀԱՅԿԱԲԱՆ ՖԻԼՈՍՈՓԻԱՆ ԲՈՓՊԻՑ ԱՌԱՋ

Մենք դիտաւորութիւն ունինք ներկայացնել այստեղ կարծառօտ կերպով այն յառաջադիմութիւնները, որ արել են օտար գիտնականները հայոց լեզւի ուսումնասիրութեան մէջ: Մեր աշխատանքը երկուսի է բաժանուած. մէկում խօսուում է եւրոպական հայկաբանների մասին 19-երորդ դարուց առաջ, միւսում՝ այն հետեւանքների մասին որ ձեռք են բերւած ներկայիս լեզւագիտութեան դիտնական մեթոդով: Այդ երկու յօդւածի վերայ մենք գուցէ աւելացնենք նաեւ երրորդ մասը, որը կը պատմի հայերի ձեռքով կատարւած աշխատութիւնների պատմութիւնը:

Նկատենք ամենից առաջ որ եթէ հայոց լեզուն կարող էր հետաքրքրել եւրոպական գիտնականներին, դորա համար մենք ամենից առաջ պարտական ենք Ուրբ Գրքերի թարգմանութեան: Ահա թէ ինչ խօսքերով է արտայայտուում այդ մասին Լա Կրոզ (La Croze) որի մասին մենք յետոյ պիտի խօսենք. «Նոր Ուխտի հայերէն թարգմանութիւնը, ըստ իս, ամենամաքուրն է բոլոր միւս թարգմանութիւններից: Այն առաւելութիւնը որ ունի այդ լեզուն՝ բառ առ բառ արտայայտել բնագրի ոճերը, չունի ոչ մի ուրիշ լեզու... Հայերէն թարգմանութեան միջոցով բազմաթիւ տեղերում կարելի է վերականգնել Եօթանասունք-ի բնագիրը: Ահա ինչու մանասանդ

սկզբում աստուածաբաններն են սկսել հայերէնը ուսումնասիրել։ Եւ դեռ մեր օրերով ամենանշանուոր հայերէնագէտներից մէկը, պրոֆեսոր Ղր Վազարդ՝ պրոֆեսոր է Գյոտթինգենի համալսարանի աստուածաբանական բաժնի։ Եւ նայած որ նա ընդարձակ տեղեկութիւններ ունի սեմական լեզուների մասին, բայց այդ գիտնականը չի կարողացաւ եօլա գնալ առանց հայերէնի։

Այդ զուտ աստուածաբանական ինտերեսին աւելացաւ և մի աւելի գործնական շարժառիթ՝ այն յոյսը թէ կարելի է միացնել Հայաստանեայց եկեղեցին Հռոմի եկեղեցու հետ։ Եթէ մոռանանք որ հէնց այդ բանը Մխիթարի նախամեծար գիտաւորութիւնն էր, պէտք է խոստովանել որ այդպիսի յոյս բաւականին հիմունք էր։ Ահա թէ ինչու կաթողիկէ Պրոպագանդան շարունակ ուղարկում էր Հայաստան ընդունակ և եռանդոտ միսիօնարներ և տպագրել էր տալիս նոցա համար բազմաթիւ հայերէն հրատարակութիւններ։ Նորա, Պրոպագանդայի, թելադրութեամբ թէպտեան հռչակաւոր միսիօնար Սորբենտացի Կլեմենտ Գալան (Galan) հրատարակել տւեց իւր «Հաշուութիւն հայոց եկեղեցու հռովմէական եկեղեցու հետ, վկայութեամբ հայոց հայրերի և վարդապետների», 3 հատոր մեծադիր, գրւած հայերէն և լատիներէն և տպագրւած Հռոմում 1650—1661 թ.։ Հեղինակը որ դեռ 1646-ին հրատարակել էր մի հայոց քերականութիւն առաջինը մի եւրոպացու ձեռքով կազմած) նկատում է յառաջաբանի մէջ որ նա բաւականանում է համեմատելով հայոց «գաւառութիւնը և աւանդութիւնները հռովմայական կաթողիկէ եկեղեցու դոգմաների հետ առանց որ և է հակաճառութեան»։

«Հաջերը, ասում է նա, կարծում են թէ եւրոպացիք չատ են ճարպիկ սովորատութիւնների համար, և որ նոցա անկարելի է դատողութիւնով համոզել։ Պէտք է ուրեմն նրանց առաջարկել զուտ և պարզ փաստեր, որ նոքա իրանք իրանց գատեն»։

Գալանը յանձն առաւ նաև Հայերին իրանց մայրենի լեզուով աստուածաբանութիւն ուսուցանել։

Հայաստան ուղարկւած միսիօնարները անհրաժեշտաբար պէտք է ուսանէին հայերէնը, և ոչ միայն գրական լեզուն՝ քահանաներից և վարդապետներից ստոր չի մնալու համար, այլ և ժողովրդական բառբանները՝ ժողովրդին քարոզելու և նորա հետ խօսելու համար։

Այս միսիոնարներից մէկը՝ հայր Յակոբ Վիլլոտ (père Jacques Villotte) Ֆրանսիայի Բար-լը—Դիւք քաղաքից (1656—1753), որը երկար ապրել էր Պարսկաստանի հայերի մօտ (աես նորա «Մի միսիոնարի ճանապարհորդութիւն Թիւրքիայում, Պարսկաստանում և այլն», Պարիզ, 1730, Ֆրանսերէն գրւած), իւր հետ բերեց մեծ թւով հայկական ձեռագիրներ, որոնք դրւեցին Պարիզի Գրադարանում և որի ցուցակը կազմեց Կոլեժ դը Ֆրանս 'ի պրոֆեսոր Գիլոմ դը Վիլլըֆրուա (Guillaume de Villefroy 1690—1777) Մոնֆոկոնի գրքի համար։ Վիլլոտ, բացի դորանից հրատարակեց մի բաւական լաւ բառարան հայ-լատին լեզուներով, Հռոմ, 1714, մեծադիր։ Վիլլըֆրուա արեղան ևս մտադրեց մի հայկական բառգիրք կազմել, բայց մեռաւ իւր մտադրութիւնը իրագործելուց առաջ։

Ինչպէս երևում է՝ միսիոնարները գոհ էին Հայաստանում մնալուց։ Այդ պարզ երևում է Պարիզում 1694 թւին հրատարակւած մի գրքից այս խորագրով՝ «Հայաստանի ներկայ դրութիւնը», որ գրաքննած էր եզուիտ Թոմաս-Շարլ Ֆլըրիօ (Thomas-Charles Fleuriat), որին յանձնարարւած էր թզլթակցել իւր ընկերութեան միսիոնարների հետ, նոցա գործունէութիւնը ղեկավարելու մտքով հարկաւոր տեղեկութիւնները հաւաքելու համար։ Մենք հարկաւոր ենք համարում այդ գրքից մի քանի կտորներ քաղել։ Այստեղ միսիոնարներ են խօսում, այսինքն մարդիկ որոնք ժողովրդի մէջ են ապրել, որի բարքերը նոքա նկարագրում են։

«Աշխարհքումս քիչ ազգեր կան որոնք աւելի լաւ լատկութիւններ ունենալին, քան հալոց ազգը։ Ամեն տեղ նկատուում է որ Հայերը առողջ դատողութեան և խելացիութեան մեծ գանձ ունին։ Նոքա քիչ են խօսում ու շատ հարց ու փորձ են անում. և ալդ պատճառով նոքա շատ ճարպիկ են դործեր կառավարելում։ Նոքա են առուտուր անում ամբողջ Արևելքում և շատ նպաստում են Եւրոպայի մի քանի քաղաքների առևտրին։

«Նոցա ամենագեղեցիկ հակումներից մէկն է՝ լաւ գրքեր կարդալը. դրան ևն նւիրում տօն օրերի մեծ մասը։ Նոքա ալքքան են կարդում Նոր կտակարանը որ գրեթէ ամբողջը անդիր գիտեն... Ստարականը նոցա մօտ միշտ լաւ ընդունկութիւն է դտնում. նոցա քէֆն է գալիս օտարներին ընդունել և հիւրասիրել... Նոցա խօսակցութեան մէջ նկատուում է շատ քաղցրութիւն, մարդասիրութիւն և շխտակութիւն... Սակաւ է պատահում նոցա մէջ թունդ կռիւներ և կատաղի չուլմունքներ։ Նոքա կորցնում են

լարգը մի մարդու համար երբ նկատում են որ նա կնթակալ է արագ շարժումների և բուռն բարկութեան:

Հայր Վիլյոտը ամեն բան գործի դրեց ալսպէս լաւ տրամադրւած մի ազգ մշակելու համար: Նա նախ քարոզեց հայերէն լեզուով որ ճոքա շատ լաւ են հասկանում և իւր քարոզներին աւելացրեց ընտանեկան խորհուրդներ երիդասարդների համար:

Վերջապէս ահա թէ ինչ են ասում միսիօնարները հայոց լեզւի մասին.

«Բացի թիւրքաց լեզւից, որ ընթացիկ է ամբողջ երկրում, հայերը ունին մի աշխարհիկ լեզու որ գործ է ածւում ժողովրդի մէջ, և մի առանձին լեզու գիտնականների համար. ճոքա այդ լեզուն անւանում են՝ գրոց լեզու: Այս լեզուով են գրւում բոլոր գրքերը: Նա մի քիչ կոշտ է և սովորելու համար բաւականին դժւար, որովհետև նա ոչ մի չարաբերութիւն չունի տշխարհքիս որ և է լեզւի հետ. բայց նա շատ վեհ է, տպաւորիչ է և շատ հարուստ է: Կրօնի, գիտութիւնների և գեղարւեստների ամենավերացական խօսքերը ունի այդ լեզուն, որով ապացուցւում է որ անցած դարերում տգիտութիւնը չէր թագաւորում Հայաստանում, որպէս այժմ է և որ այդ երկրում, որպէս այդ այժմ արդէն գիտե՞ք, պէտք է հռչակաւոր վարդապետներ և հմուտ ուսուցիչներ եղած լինէին: Այդ լեզւի տառերը շատ գեղեցիկ են. մի քանիսը կարծում են, թէ դոցա հնարողը Յովնան էս Ոսկէբերանն է. բայց այս մի բանը հաստատ է որ այդ գիտնական լեզուն հասկանալ և խօսել սովորելը մեծ արժանիք է: Նրկու դար առաջ ճոքա միայն ձեռագիրներ ունէին, իսկ այժմ բաղմամբիւ գրքեր ունին որ ճոքա տպագրել են տալիս Նւրուպալի մի քանի քաղաքներում»:

Հայերէնը սովորելու համար մի երրորդ շարժառիթ էլ աւելացաւ այն երկուսի վերայ, որ մենք վերը նկատեցինք. այդ էր՝ առևտրական և քաղաքական շահերը: Արևելեան կենդանի լեզուների կարևորութիւնը գուշակել էր ղեռ Կոյբեր ¹⁾, երբ նա հիմնեց «Լեզուների դպրոցը» («Jeunes de Langues»), բայց այդ կարևորութեան վերայ շեշտեց շատ աւելի ուշ Լուի-Մատթէոս Լանգլէ (Louis-Mathieu Langlès), 18-երորդ դարու վերջերքում: Այս եռանդոտ հայրենասէրը առաջարկեց ֆրանսիական կառավարութեան («Դաշնակցութեան» ժամանակ) հիմնել մի «Դպրոց արևելեան կենդանի լեզուների» («l'Ecole des langues orientales vivantes»), որ և այդ ժամանակահից դէս մեծ ծառայութիւններ է ունել:

¹⁾ Ֆրանսիական մեծ միեխոտր Լուդովիկոս XIV-ի ժամանակ. մեռաւ 1683 թականին: Ծանօթ. խմբ.

Հայերէնի դաստուռութիւնը այդ գպրոցում սկսեց 1798 թւականին, բայց այդ լեզուն վերացրին 1801 թւականին, որովհետեւ նորա պրոֆեսորը՝ Յակոբ Շահան Զրպետեանը (Cirbied) բաւականաչափ չլաւ չր գիտէր ֆրանսերէն։ Նա վերսկսեց իւր դաստուռութիւնը 1811 թւականին։ Այդ մասին դեռ խօսք կը լինի ներքեւ։

Վերջապէս հայերէնը մեծ օգուտներ է տալիս պատմաբանին և ֆիլոլոգին։ Դորանում համոզուելու համար բաւական է տեսնել հայոց պատմագիրների գեղեցիկ ժողովածուն, որ հրատարակել է Վիկտոր Լանգուա, և աշխատութիւնները Լաֆարդի, Ֆր. Միլլերի, Հիւբըմանի և այլն, որոնց մասին դեռ աւելի ընդարձակօրէն պէտք է խօսենք։

Աշխատենք այժմ գծագրել մի քանի խօսքով թէ ինչ են արտադրել եւրոպայի զանազան երկիրները մեր դարուց առաջ հայերէնի վերաբերմամբ։

Իտալիայի մասին արդէն վերը խօսեցինք։ Մնաց միայն յիշատակել Ֆրանսուա Ռիւոլա՛ի մասին (François Rivola), կանոնիկոս Միլանում, հեղինակ մի քերականութեան (1624 թ.) և մի բառարանի, որի առաջին տպագրութիւնը լոյս տեսաւ Միլանում 1621 թ.։ Այդ աշխատասիրութիւնը վերապէս Գարիգում 1633-ին, կարդինալ Ռիչչիչի՛ի ծախքով, որը այդ բառարանը նշանակեց միսսիսների գործածութեան համար։ Այդ բառարանը շատ անկատար է և լիքն է սխալներով։ Իփօդատօ Ներսէսէլի՛ինը, հրատարակած Հռովմում 1695-ին և մանաւանդ հայր Վիլոտ՛ինը (Հռովմ, 1714 թ.) Ռիւոլայի բառգրքից անչափ աւելի բարձր են։

Դերմանիայում հայերէն տառերով առաջին գիրքը հրատարակեց արեւելագէտ Անդրէաս Ակոլութ (Andreas Acoluth) 1654—1704)։ Նորա խորագիրն է՝ Obadiah armenus quocum analysi vocum armenicarum grammatica et collatione versionis armenicae cum fontibus aliisque maximam partem orientalibus versionibus exhibetur primum in Germania specimen characterum armenicorum in celeberrima academia Lipsiensi procuratorum a M. Andrea Acolutho Vratislav. Siles. Anno epochae Messianae MDCXXC, Armenorum MCXXIV, Lipsiae typis Justini Brandi.։ Այդ գիրքը սկսւում է մի մեծ յառաջաբանով, ուր

պատմւած է հայկաբանութեան մասին 1680-ից առաջ. առաջին եօթ երեսները բաժանւած են երեք սիւնեակի, որոնցից առաջինում լատինական տառերով հայոց տառադարձութիւնն է զրւած, երկրորդում՝ հայերէն տառերը և երրորդում՝ լատիներէն թարգմանութիւնը: Այս բոլորի հետ կայ մի շատ մանրամասն քերականական անալիզ (երես 7—53) բացառութիւններով: Վերջապէս երես 54, 55 և 56 մեզ տրուած է հայոց այբբենարանը և տառերի արժէքը: Հեղինակը շատ խորը ուսումնասիրած էր սեմական լեզուները և, բացի դորանից, ուսումնասիրած էր պարսկերէնը և տաճկերէնը. նա մտադիր էր հրատարակել Ղորանը չորս լեզուներով ընտրող իշխան Ֆրիդրիկոս III-ի ծախքով, բայց նորանից միայն մէկ նմուշ լոյս տեսաւ 1701 թւականին: Աւելացնենք որ Աղոյութ ուսել էր մի ուրիշ արևելագետի, Սուգուստ Պֆէյֆեր'ի մօտ (1640—1698), որ ասուածաբանութեան պրոֆեսոր էր նախ Վիտտենբերգ'ում, ապա Լէյպցիգում:

Մենք այժմ հասնում ենք 18-երորդ դարու ամենանշանաւոր հայկաբանին՝ Յովհաննէս-Յովակիմ Շուօկեր'ին (Johan-Joakim Schröder): Նա ծնեց Նէուկիրխէն քաղաքում Հէսսէն-Վասսէլի լանդգրաֆութեան մէջ 6-ն յուլիսի 1680 թ., ուսեց Եբրայերէն և այլ արևելեան լեզուներ Մարբուրգ'ի համալսարանում Գէորգ Օթոյի (1634—1713) մօտ, որը նորան յանձնարարեց Ֆրանկֆուրտի հռչակաւոր Իօբ Լուդոլֆ'ին (Job Ludolf): Այդտեղ նա ուսեց մանաւանդ եթովպերէնը: 1705 թ-ին լանդգրաֆը նրան միջոցներ տւեց Ուտրեխտ գնալու համար, ուր նա լսեց դասախօսութիւնները Ռօլլ'ի (Roell), Լէյդէկէր'ի (Leydecker) և մանաւանդ Ռէլանդ'ի (Reland): Հոլլանդիա գտնւած ժամանակ նա լսեց Թոմաս Դոլթնեցի անունով մի հայոց եպիսկոպոսի մասին, որը Ամստերդամ էր եկած, ուղեկցութեամբ իւր քրոջորդի Լուկաս Նուրիգիանի (Luc Nurigian, երևի Նուրիջանեան), այնտեղ հայոց գրքեր տպագրել տալու համար: Շուօկերը, որ սկսել էր հայերէնը ուսանել դեռ ևս Մարբուրգում, շուտապէս ծանօթանալ եպիսկոպոսի հետ: Այս գիտնական վարդապետի ղեկավարութեամբ նա արագ առաջ գնաց և երբ, կրկու տիւս յետոյ, Թոմաս եպիսկոպոսը ուզեց վերադառնալ հայրենիք, Շուօկերը վճուեց նորան ուղեկցել: Լանդգրաֆը արդէն համաձայնել էր ճանապար-

հաճախքը տալ, երբ եպիսկոպոսը յանկարծ հիւանդացաւ: Շուօղէր առանց նորան ուղեորւեց Արխանգէլ, Մոսկայում եպիսկոպոսին հանդիպելու մոքով: Երբ նա եկաւ այդ քաղաքը, իմացաւ որ եպիսկոպոսը վախճանւած էր, բայց և այնպէս վճուեց շարունակել իւր ճանապարհը Հաշտարխանի վրայով:

Տարաբաղդաբար Ռուսաց կայսրը մերժեց նրան իւր թոյլտուութիւնը, այնպէս որ նա ստիպւեց վերադառնալ Ամստերդամ, ուր բարեբաղտաբար դեռ ևս կենում էր Ղուկաս Նուրիջանեանը: Նա այդտեղ շարունակեց իւր ուսումնասիրութիւնները և յղացաւ մի հայկական քերականութիւն և մի բառարան կաղմելու միտքը: Քերականութիւնը լոյս ընծայելուց առաջ՝ նա մի ճանապարհորդութիւն արաւ Անգլիա, ուր նա ծանօթացաւ ժամանակի գլխաւոր գիտնականների հետ, որոնց մէջ էին նաև արքեպիսկոպոս Տենիսոն, Բենտլէյ, Հուդսոն և այլն: Աշխատութիւնը վերջապէս լոյս տեսաւ 1711 թ-ին այս վերնագրով «Thezaurus Linguae Armenicae»: Ահա նորա բովանդակութիւնը.

Մի ձօնից յետ իւր բարերար իշխանին, Հեսսէնի լանգգրաֆին, գալիս է 64 երեսի մի դիսերտացիա հայոց լեզուի պատմութեան մասին: Խօսք չկայ որ գրքի այդ մասը լիքն է իւր ժամանակի սխալներով: Յետոյ գալիս է գրաբառի մի քերականութիւն (երես 1—220) և մի առողաբանութիւն (երես 221—248): Երրորդ բաժանմունքը պարունակում է մի հայկական բնագիր «Confessio ecclesiae armenicae» (երես 249—298), որ վերլուծւած են երես 395 մինչև 410): Երրորդ բաժանմունքը (երես 299—324) զբաղւում է նոր հայերէնով: Հինգերորդը (երես 325—370) ունի այս վերնագիրը «Dialogi tres de sacris, secularibus et domesticis rebus Armenorum»: Վերջապէս երես 371—397 պարունակում է «Eplis-tolographie» (նամակագրութիւն), և այդ բոլորից յետ գալիս է մի հայերէն բառգիրք 40 երեսի և մի լատիներէն բառգիրք 28 երեսի: Այդ աշխատութիւնը գովելու համար բաւական է ասել, որ նա, իբր ամբողջութիւն, մինչ օրս էլ չի գերադանցւած եթէ ոչ մանրամասնութիւնների մէջ:

Շուօղէրը կաղմեց նաև մի բառարան որը երբէք չը հրատարակւեց և որը պահւած է Գերմանիայի Կասսել քաղաքի գրադա-

րանում: Իւր քերականութիւնը հրատարակելուց յետ նա վերադարձաւ Մարբուրգ, ուր նա նշանակեց արեւելեան լեզուների պրոֆեսոր, իսկ յետոյ՝ աստուածաբանութեան: Նա մեռաւ 1736-ին: Նորա որդիներից մէկը, Յովհաննէս-Վիլհելմ (1726—1793), որ արեւելագէտ էր իւր հօր նման, մի տարի առաջ նորա տեղն էր բռնած:

Հայկաբանութեան ճաշակը թափանցեց մինչև անգամ Շեդիա, ուր Հենրիկոս Բրեններ (Brenner, 1669—1732), օգնութեամբ Իսպահանի մի իտալացի դոմինիկեանի, հրատարակեց Մովսէս Խորենացու պատմութեան բովանդակութիւնը (Ստոկհոլմ, 1723 թ.): Այդ նոյն Բրենները ուղեկցեց Շեդիայի թագաւոր Կարլոս IX-ի դեսպանին զէպի Պարսկաստան:

Մնգիկայում 1736 թւականին լոյս տեսաւ Խորենացու Պատմութեան մի զեղեցիկ հրատարակութիւն՝ Mosis Chorenensis Historiae Armeniacae libri iii, հայերէն և լատիներէն, որ հրատարակեցին Վիլհելմ և Գէորգ Վիստոն (Whiston) եղբայրները: Մովսէս Խորենացու առաջին տպագրութիւնը լոյս էր տեսել Ամստերդամ, 1695-ին, և նոյն հեղինակին յատկացրած «Աշխարհագրութիւնը» 1668 թւականին:

Այս մի յօււածը վերջացնելու համար մեզ մնում է ցոյց տալ թէ ինչ է արւած Ֆրանսիայում այդ մասին 19-երորդ դարուց առաջ: Մենք արդէն յիշատակեցինք Լա Կրոզի անունը: Այս գիտնականը, որի անունն էր Մաթուրին Վէյսիէրդը Լա Կրոզ, ծնւեց Նանտում 1661 թ.: Ձկնած ուսումից իւր ուսուցչի պատճառով, նա նաև նստեց զէպի Գլադելուպ (Ամերիկայում) այստեղ վաճառականութիւնով պարապելու համար: Նա այդտեղ սովորեց անգլիերէն, իսպաներէն և պորտուգալերէն: Վերդառնալով Ֆրանսիա, նա ուսեց բժշկականութիւնը յետոյ մտաւ Սոմիւրի բենեդիկտների մօտ, ուր նա կուեց նոցա մեծի հետ և ստիպւեց փախչել Բաղէլ և այստեղից Բերլին: Նա այս քաղաքում շատ լաւ ընդունեց և դառաւ ուսուցիչ Պրուսիայի պրինցեսի. այդտեղ ծանօթացաւ Լէյբնից Ֆիլոսոֆայի հետ, որը խրախուսեց նորան արեւեան լեզուները ուսանել: 1739-ին նա հրատարակեց իւր «Քրիստոնէութեան պատմութիւնը նթովպայում և Հայաստանում» (Ֆրանսերէն): Նուե կազմեց մի հայերէն բառարան, որ երբէք չը հրատարակեց: Իրողութիւնը

այս է որ այն ժամանակ ով լրջօրէն կամենում էր զբաղուել հայերէնով, ստիպւած էր իւր այլ և այլ ընթերցումներից հայերէն բառերի և ոճերի բառգիրք շինել: Լա Կրոզի բառգիրքը, որը տասներկու տարւայ աշխատանք է, պահւած է Բելգիայի Լէյդէն քաղաքի համալսարանի գրադարանում: Վիստոն եղբայրների բառգիրքն էլ ձեռագիր մնաց: Նոյնն եղաւ նաև այն բառգրքի հետ որ արքայ Լուրդէ (Lourdet, 1729—1797) կազմել էր հայ-լատին լեզուներով: Այս արքան, որ Կոլէժ դը Ֆրանս դպրոցում երաջերէնի պրոֆեսոր էր, իբր գրաքննիչ պէտք է քննէր մի ուրիշ բառարան, որ մտադիր էր հրատարակել հայր Գաբրիէլ դը Վիլլաֆոր (Villafore): Վերջինս մի հին միսիօնար էր և երեսուն տարի Հայաստանումն էր անցկացրել: Այս աշխատութիւնը հիմնւած էր մի ուրիշ աշխատութեան վերայ, Հայաստանում գտնւած կատուցին միաբանների կառավարչի ձեռքով, որի անունն էլ Հովհաննէս-Մկրտիչ ա Տօքսիքիա (Jean-Baptiste a Toxicia): Զը նայած դորան, Վիլլաֆորը մեղադրում էր Լուրդէին, թէ սա պահել է նորա ձեռագիրը՝ նոյնը արտագրելու և իւր անունով հրատարակելու համար: Լուրդէ, զայրացած այդ մեղադրանքից, որոնց իւր բառգրքի ձեռագիրը, որ ինքը մեծ խնամքով խմբագրել էր, և Վիլլաֆորի ներկայութեամբ կրակը գցեց: Երեք տարի յետոյ, անխնջ արքայն վերջացրեց նոյն բառգրքի երկրորդ օրինակը, որը դժբաղդաբոր երբէք լոյս չը տեսաւ: Այդ ձեռագիրը յետոյ ձեռք բերեց դոքտոր Բելլօ (Bellaud), արևելեան կենդանի լեզուների դպրոցի նախկին աշակերտը:

Լուրդէն ձեռնարկեց նաև հրատարակելու հայոց աստուածաշունչը լատիներէն թարգմանութեամբ և ծանօթութիւններով: Այդ նպատակով նա ժինէ՝ անգամ մի քանի տարի անցկացրեց Սուրբ Ղազարում (Վենետիկ, Սխիթարեանների մօտ), բայց իւր ձեռնարկութիւնը վերջացնելու ժամանակ չունեցաւ: Իւր ամբիօնը արքայ Գարնիէին (Garnier) զիջանելուց յետո՝ պայթեց Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը (1789-ին), և չուզենալով երդումն տալ հոգևորականութեան համար նոր կազմւած քաղաքացիական սահմանադրութեան՝ նա յետ քաշեց Իտալիա, ուր և մեռաւ: Հայոց բառագրականութեան (լեքսիկոգրաֆիա) և արքայ Լուրդէի մասին աւելի լիակատար տեղեկութիւնների համար կարելի է օգտուել Քատրմէրի (Quatremère) յօդածից, զետեղւած Քրիստոնէական ֆիլոսոֆայութեան տարեգրութեան (Annales de Philosophie Chrétienne) 1839 թ. 31 յուլիսի համարում:

Հետևեալ անգամից մենք կը խօսենք հայկաբանութեան մասին 19-երորդ դարում: